# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2017 թվականի N 34-Ա

ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Նախկին Պտղնի այգեգործական զանգված 7-րդ տեղամասի թիվ 52 հասցեում գտնվող Արարատ Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 1832090, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0219-/ վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 13-րդ փողոց 1-ին փակուղի N 7 այգետնակ:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
3. Վճարել Գետամեջի գյուղապետարանի 900115112063 հաշվեհամարին՝ 3000 (երեք հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2017 թվականի մայիսի 19
գ.Գետամեջ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2017 թվականի N 35-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1 կետերի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Օրինականացնել Արարատ Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 13-րդ փողոցի 1-ին փակուղու N 7 հասցեի բնակելի կառուցապատման (այգեգործական) հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցած սան հանգույցը՝ 1,9 քառակուսի մետր մակերեսով, քանի որ.
1) տվյալ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,
2)դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
2. Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի մայիսի 19
գ.Գետամեջ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2017 թվականի N 36-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ, ԱՂԲԱՀԵՌԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի մայիսի 6-ի N 01/15.1/1904-17 և 2017 թվականի մայիսի 17-ի N 01/15.2/2064-17 գրությունների՝ ***որոշում եմ.***

1. 2017 թվականի մայիսի 27-ին համայնքի տարածքում կազմակերպել և անցկացնել համայնքային շաբաթօրյակ, իրականացնել սանիտարական մաքրման, աղբահեռացման և բարեկարգման միջոցառումներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի մայիսի 20
գ.Գետամեջ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2017 թվականի N 37-Ա

### ՄԻՆՉԵՎ 20 ՏՈԿՈՍ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. Անհատույց թողնել և ճանաչել քաղաքացի՝ Վարդան Աղասու Խաչատրյանի սեփականության իրավունքը՝ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 1992 թվականի ապրիլի 20-ի N03 որոշմամբ սեփականաշնորհված 0,08 հեկտար գյուղատնտեսական նշանակության վարելահողից (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0205-0047) մինչև 20 տոկոս ավել օգտագործվող 46 քառակուսի մետր գյուղատնտեսական նշանակության վարելահողի նկատմամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի մայիսի 20
գ.Գետամեջ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մայիսի 2017 թվականի N 38-Ա

### ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Նախկին գ. Գետամեջ (Պտղնի) հասցեում գտնվող Ռիտա Վիկտորի Մկրտչյանին և Կարապետ Ցոլակի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2052267, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0224-0010/ վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 15-րդ փողոց, 2-րդ փակուղի N 10 այգետնակ:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2017 թվականի մայիսի 22
գ.Գետամեջ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մայիսի 2017 թվականի N 39-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՈՐՄԱՏԻՎ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 5-րդ մասերով և 63-րդ հոդվածի 1-ին մասով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 10-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19-ի N 47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 18-Ն որոշումը պաշտոնական հրապարակել 2017 թվականի մայիսի 23-ին:
2. Պաշտոնական հրապարակումն իրականացնել համայնքի տարբեր հատվածներում ցուցատախտակներին փակցնելու և համայնքապետարանի պաշտոնական կայքում (www.getamej.am) տեղադրելու միջոցով:
3. Պաշտոնական հրապարակման պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղարի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի մայիսի 22
գ.Գետամեջ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մայիսի 2017 թվականի N 40-Ա

### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի մայիսի 17-ի N 01/12.2/2044-17 գրության՝ ***որոշում եմ.***

1. «Մաքուր Հայաստան» ծրագրի իրականացման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

1) Մերուժան Պապոյան - համայնքի ղեկավարի տեղակալ, աշխատանքային խմբի ղեկավար,

2) Արտուշ Կարապետյան - համայնքի ավագանու անդամ, աշխատանքային խմբի անդամ,

3) Սարիկ Ղազարյան - համայնքի ավագանու անդամ, աշխատանքային խմբի անդամ,

4) Լիաննա Գեղամյան - «Գետամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն, աշխատանքային խմբի անդամ:

2. Հանձնարարել աշխատանքային խմբին՝

1) բարձրացնել համայնքի բնակչության, ուսումնական հաստատությունում իրազեկվածությունն ու մասնակցությունը շրջակա միջավայրի մաքրության պահպանության գործում,

2) իրականացնել ամենօրյա հսկողություն շրջակա միջավայրի մաքրության պահպանման նկատմամբ:

3. Առաջարկել ուսումնական հաստատության տնօրենին՝ իրականացնելու սանիտարական մաքրման աշխատանքներ իրենց հաստատության շրջակա տարածքներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի մարտի 22
գ.Գետաշեն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մայիսի 2017 թվականի N 41-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի N 35-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի 2017 թվականի մայիսի 19-ի «Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման մասին» N 35-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2017 թվականի մայիսի 24
գ.Գետամեջ